

2017թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Թեմայի անվանումը

Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման գերակայությունները

Հայաստանի Հանրապետությունում

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2017թ. - 31.12.2017թ.

Թեմայի ղեկավարը

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Թեմայի մասնակիցներ

1. Սարգսյան Վարդան Ալբերտի – ավագ գիտաշխատող
2. Հայրապետյան Ռուբեն Արմենի - ավագ գիտաշխատող
3. Ասատրյանց Սարգիս Արմենի - ավագ գիտաշխատող
4. Քոչարյան Մարիանա Ռաֆիկի – գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

Հետազոտության իրականացման ընթացքում նախատեսվում է հանրային կառավարման համակարգում պետական և տեղական ինքնակառավարման ենթահամակարգերի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության սահմանակարգի համակողմանի վերլուծության իրականացում, գործող համակարգերի արդյունավետության գնահատում, ինչը հնարավորություն կտա վեր հանել ոլորտում առկա հիմնական թերություններն ու զարգացման խոչընդոտները և մշակել համակարգի արդյունավետության բարձրացման համապատասխան ուղիներ: Առանձին հետազոտության է ենթարկվելու լիազորությունների բաշխումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու միջև: Ծրագրի շրջանակներում կքննարկվի և վերլուծության կենթարկվի քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության արդյունավետությունը: Ծրագրի կարևոր բաղադրիչներից է նաև վարչական բարեփոխումների արդյունքների և բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատումը վերջին երկու տասնամյակների կտրվածքով: Սա, թերևս, հնարավորություն կընձեռի առավել հստակ ուղենշել վարչատարածքային քաղաքականության ու ֆինանսավորման հիմնական ուղղությունները:

Հետազոտության ռազմավարությանը համապատասխան ակնկալվում է պետական կառավարման համակարգի զարգացման արդի գերակայությունների առաջքաշումը, որն իր ատացողումը կգտնի հայեցակարգային փաստաթղթերում: 2015թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Կառավարության կայունությունն ապահովելու համար պետք է հաշվի առնել ժամանակակից պառլամենտարիզմի զարգացման փորձը, ինչպես նաև կայունությանը նպաստող այն միջոցները, որոնք իրենց արդարացրել են միջազգային պրակտիկայում: Նույնը վերաբերում է նաև օրենսդիր իշխանությանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց գործունեության արդյունավետ կառուցակարգերին սահմանադրական նոր օրակարգի պայմաններում: Այս համատեքստում ակնկալվում է ունենալ օրենսդիր և գործադիր իշխանության կազմակերպական կառուցվածքների զարգացման ուղղությունների, վարչատարածքային բաժանման և տարածքային կառավարման բարեփոխումների,

կառավարման ֆինանսական և սոցիալական կառուցակարգերի զարգացման ուղղությունների վերաբերյալ գիտական լուրջ հիմնավորումներով ռազմավարական հայեցակարգեր: Այս հայեցակարգերը կարող են ուղենիշ լինել երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելիս:

Հետազոտության իրականացման արդյունքում մշակվելու են նաև օրենսդրաիրավական հայեցակարգեր տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման գերակայությունների վերաբերյալ, որոնց միջոցով հնարավոր կլինի իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ տեղական ինքնակառավարման համակարգում, զարգացնել ապակենտրոնացման ռազմավարության շարունակական իրականացումը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել ոլորտի բոլոր շահառուների ներգրավվածությունը գործընթացներում, մասնավորապես, վերլուծություններում համայնքի բնակիչների մասնակցության ապահովումը, ինքնին կբարձրացնի վերջիններիս մասնակցության աստիճանը նաև տեղական ինքնակառավարմանը:

Առանձնակի կարևորվելու է հանրային կառավարման ոլորտում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների արմատավորման կառուցակարգերի և դրանց ներդրման համար անհրաժեշտ միջոցառումների մշակումը:

Հետազոտության արդյունքների մասին ներկայացվելու է հաշվետվություն՝ ներառյալ հանրային կառավարման արդյունավետության բարձրացման բոլոր հայեցակարգային փաստաթղթերը և առաջարկությունների փաթեթը, որոնք մշակվելու են հետազոտական խմբի կողմից և կցվելու հաշվետվությանը: Բացի դրանից, աշխատանքի արդյունքները ամփոփվելու են նաև հետազոտական խմբի կողմից գիտական հոդվածների հրապարակումների, ինչպես նաև մենագրության տեսքով:

Կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը

Ուսումնասիրել թեմային վերաբերող հայրենական և արտասահմանյան աղբյուրները, հավաքել հանրային կառավարման արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ վիճակագրական նյութեր:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ինստիտուցիոնալ, գործառնությային և կառուցվածքային վերլուծություն, դրանց

արդյունավետության բազմագործոնային գնահատում, դինամիկայի միտումների և առկա թերությունների, դրանց հաղթահարման ուղիների բացահայտում:

Հանրային կառավարման արդյունավետության գնահատման հիման վրա ոլորտի բարեփոխումների հայեցակարգային գերակայությունների մշակում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի արդյունավետության բարձրացման, տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման համար:

Հանրային կառավարման բարեփոխումների առաջարկվող միջոցառումների փաթեթի ձևավորում, հրապարակման ենթակա գիտական հոդվածների և մենագրության նախապատրաստում, սեմինարների ընթացքում քննարկում, հաշվետվության կազմում:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Հանրային կառավարման արդյունավետության բարձրացումը շարունակական գործընթաց է. համակարգը պետք է ապահովի կառավարման բոլոր գործառնությունների և խնդիրների իրագործման համար անհրաժեշտ միջոցառումները: Ցանկացած կտրուկ շրջադարձային փոփոխություն հանրային կառավարման համակարգում կարող է ոչ միայն արդյունավետ չգտնվել, այլև լուրջ վնասներ հասցնել ինչպես տնտեսությանը, այնպես էլ հանրության նորմալ կենսագործունեությանը: Այս համատեքստում «Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» ծրագրից ակնկալվող արդյունքներն ավելի քան խոսուն են և բխում են սահմանված նպատակից և խնդիրներից:

Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է հանրային կառավարման համակարգում պետական և տեղական ինքնակառավարման ենթահամակարգերի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության սահմանակարգի համակողմանի վերլուծության իրկանացում, գործող համակարգերի արդյունավետության գնահատում, ինչը հնարավորություն կտա վեր հանել ոլորտում առկա հիմնական թերություններն ու զարգացման խոչընդոտները և մշակել համակարգի արդյունավետության բարձրացման համապատասխան ուղիներ: Առանձին հետազոտության է ենթարկվելու լիազորությունների բաշխումը պետական

կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու միջև: Ծրագրի շրջանակներում կքննարկվի և վերլուծության կենթարկվի քաղաքացիական ծառայության և համայնքային ծառայության արդյունավետությունը: Ծրագրի կարևոր բաղադրիչներից է նաև վարչական բարեփոխումների արդյունքների և բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատումը վերջին երկու տասնամյակների կտրվածքով: Սա, թերևս, հնարավորություն կընձեռնի առավել հստակ ուղենշել վարչատարածքային քաղաքականության ու ֆինանսավորման հիմնական ուղղությունները:

Ծրագրի ռազմավարությանը համապատասխան ակնկալվում է պետական կառավարման համակարգի զարգացման արդի գերակայությունների առաջաջումը, որն իր աստացուլումը կգտնի հայեցակարգային փաստաթղթերում: Այս համատեքստում ակնկալվում է ունենալ օրենսդիր և գործադիր իշխանության կազմակերպական կառուցվածքների զարգացման ուղղությունների, վարչատարածքային բաժանման և տարածքային կառավարման բարեփոխումների, կառավարման ֆինանսական և սոցիալական կառուցակարգերի զարգացման ուղղությունների վերաբերյալ գիտական լուրջ հիմնավորումներով ռազմավարական հայեցակարգեր: Այս հայեցակարգերը պետք է ուղենիշ լինեն երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելիս:

Ծրագրի իրականացման արդյունքում մշակվելու են նաև օրենսդրաիրավական հայեցակարգեր տեղական ինքնակառավարման համակարգի կատարելագործման գերակայությունների վերաբերյալ, որոնց միջոցով հնարավոր կլինի իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ տեղական ինքնակառավարման համակարգում, զարգացնել ապակենտրոնացման ռազմավարության շարունակական իրականացումը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել ոլորտի բոլոր շահառուների ներգրավվածությունը գործընթացներում, մասնավորապես, վերլուծություններում համայնքի բնակիչների մասնակցության ապահովումը, ինքնին կբարձրացնի վերջիններիս մասնակցության աստիճանը նաև տեղական ինքնակառավարմանը:

«Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի շրջանակներում, ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ պետական մարմինների, տեղական

ինքնակառավարման մարմինների, լրագրողների, այլ շահառուների հետ միասին հասարակության իրազեկման բարձրացման նպատակով կկազմակերպվի հանրային բաց լսումներ և քննարկումներ, լրատվական քարոզարշավ, որի բովանդակությունը հիմնված կլինի իրազեկության մակարդակի ուսումնասիրության արդյունքների վրա և որը կլրացնի տեղական մակարդակում համայնքային կենտրոնների կողմից սրամադրած իրազեկության տարածմանը:

Ծրագիրը ներկայացվելու է որպես առանձին հաշվետվություն՝ ներառյալ հանրային կառավարման արդյունավետության բարձրացման բոլոր հայեցակարգային փաստաթղթերը և առաջարկությունների փաթեթը, որոնք մշակվելու են հետազոտական խմբի կողմից և կցվելու հաշվետվությանը հավելվածների բաժնում: Բացի դրանից, ծրագրի իրականացման արդյունքները ամփոփվելու են նաև հետազոտական խմբի կողմից գիտական հոդվածների հրատարակումների, ինչպես նաև մենագրության տեսքով: